ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» «----------» 2025թ.

N----- -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՅԴ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածով և «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 11-րդ, 35-րդ և 55-րդ հոդվածներով `

Մասիս համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Մասիս համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սահմանել Մասիս համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման կարիքների գնահատման չափորոշիչները՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում ավագանու հաստատմանը ներկայացնել սույն որոշումից բխող՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N370-Ն որոշման 3-րդ և 4-րդ հավելվածների համապատասխան հոդվածներում փոփոխություններ կատարելու մասին ավագանու որոշման նախագիծը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

Հավելված 1
Մասիս համայնքի ավագանու
2025 թվականի ---------
--ի N ---Ն
որոշման

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՅԴ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Մասիս համայնքի (այսուհետև՝ Համայնք) սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների և դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների, այդ լիազորությունների իրականացման և համապատասխան չափորոշիչների հետ կապված հարաբերությունները:
2. Համայնքի կամավոր խնդիրներն այն խնդիրներն են, որոնցով համայնքային կյանքի բնականոն ընթացքը ուղղակիորեն պայմանավորված չէ և կարող են իրականացվել, միայն պարտադիր խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներից բացի, հավելյալ ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
3. Համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրներն են՝ սոցիալական կարիքների բավարարմանը կամ բնականոն կենսագործունեության ապահովմանը կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու հանգամանքների առաջացման կանխարգելմանը կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին կամ ընտանիքին այդ վիճակից դուրս բերելուն ուղղված սոցիալական ծառայությունների տրամադրումը:
4. Համայնքի սոցիալական աջակցության կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի ղեկավարը իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

1) միջոցներ է ձեռնարկում համայնքում կյանքի դժվարին իրավիճակ առաջացնող ռիսկերի ու դրանց պատճառների վաղ հայտնաբերման և կանխարգելման, ինչպես նաև համայնքում սոցիալական աշխատանքի արդյունավետ մեխանիզմների կիրառման և շարունակական զարգացման ուղղությամբ.
2) այլ մարմիններից կամ կազմակերպություններից, ինչպես նաև ֆիզիկական անձանցից ստացված կամ իր գործառույթների իրականացման ընթացքում ստացված տեղեկատվության հիման վրա հայտնաբերում է «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի «բ», «գ», «դ» ենթակետերում նշված հանգամանքներով պայմանավորված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին կամ ընտանիքին, ներառյալ՝ տնայցեր կատարելու միջոցով և օրենսդրությամբ սահմանված դեպքերում ու կարգով ուղղորդում է Միասնական սոցիալական ծառայություն.

3)օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրում կամ կազմակերպում է սոցիալական աջակցության տրամադրումը՝ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված և սոցիալական աջակցության ոլորտում պետական լիազոր մարմնի հաստատած ուղեցույցի համաձայն մշակված համայնքային սոցիալական ծրագրերի շրջանակում։ Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին կամ ընտանիքին տրամադրում է «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հետևյալ սոցիալական ծառայությունները.

ա. խորհրդատվական օգնություն.

բ. բնաիրային օգնություն.

գ. կենցաղային օգնություն.

դ. իրավաբանական օգնություն.

ե. սոցիալ-հոգեբանական օգնություն.

զ. օրենսդրությամբ նախատեսված այլ սոցիալական ծառայություններ։

4)կազմակերպում է սոցիալական ծառայությունների տրամադրումը կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց միջոցով.

5)իրականացնում է ընտանիքի սոցիալական գնահատում, բացառությամբ անապահովության և համալիր գնահատման։ Ընտանիքի սոցիալական գնահատումն իրականացնում է սոցիալական աջակցության ոլորտում պետական լիազոր մարմնի հաստատած կարգերով, իսկ անձի կամ ընտանիքի առանձին կարիքների գնահատման կարգի բացակայության դեպքում դիմում է սոցիալական աջակցության ոլորտում պետական լիազոր մարմին.

6)Միասնական սոցիալական ծառայության համապատասխան տարածքային կենտրոնի, համագործակցության ցանցի մասնակիցների, համայնքի բնակչության ներկայացուցիչների և շահագրգիռ այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց մասնակցությամբ կազմակերպում է Համայնքի բնակչության սոցիալական կարիքների գնահատման հիման վրա համայնքային սոցիալական ծրագրերի մշակման և դրանց իրականացման գործընթացը.

7)մասնակցում է սոցիալական համագործակցության և աջակցող ցանցերի ձևավորմանը և համալրմանը.

8)աջակցում է բնակչության զբաղվածության հետ կապված խնդիրներին.

9)օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով սոցիալական ծառայություններ տրամադրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններին կամ սոցիալական ծառայություններ տրամադրող ու համայնքի հետ համագործակցող կազմակերպություններին կամ ֆիզիկական անձանց փոխանցում կամ նրանցից ստանում է սոցիալական ծառայություն ստացող անձանց անձնական, ընտանիքների նույնականացման կամ սոցիալական ծառայության տրամադրման համար անհրաժեշտ այլ տվյալներ։ Համագործակցության պայմանագիրը կամ հուշագիրը կնքելիս պարտադիր են նաև «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջների կիրառումն ու ապահովումը.

10)սոցիալական աջակցության ծրագրերի կազմակերպման և իրականացման նպատակով կնքում է պայմանագրեր կամ հուշագրեր կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց հետ։

5.Համայնքի ղեկավարը սոցիալական պաշտպանության բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները.

1) «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հրատապ արձագանք պահանջող իրավիճակի հետևանքով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի (ընտանիքի) անձանց սոցիալական կարիքների նախնական գնահատումը և օրենսդրությամբ սահմանված կարգով ու դեպքերում սոցիալական աջակցության տրամադրումը։

6.Համայնքի սոցիալական աշխատողի հիմնական իրավունքներն ու պարտականությունները, գործառույթները սահմանված են, և այլ հարաբերությունները կարգավորված են «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով։

7.Սույն կարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված սոցիալական աջակցության ծառայությունների իրակակացման եղանակներն են.

1) **Խորհրդատվական օգնությունն** իրականացվում է անձի հիմնական պահանջմունքները և սոցիալական կարիքները բավարարելու ուղիներ և եղանակներ գտնելու, ստեղծված իրավիճակին համարժեք այլ սոցիալական ծառայություններ ստանալու, համապատասխան պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ կամ կազմակերպություններ կամ ֆիզիկական անձանց ուղղորդելու վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու միջոցով։

Անձին խորհրդատվական օգնությունն առանց դիմումի տրամադրում է դրա լիազորությունն ունեցող համայնքային ծառայողը։

2) **Բնաիրային օգնությունը** տրամադրվում է անձին կամ ընտանիքին անձի հիմնական պահանջմունքները բավարարելու նպատակով։ Բնաիրային օգնությունը կարող է տրամադրվել հետևյալ ձևերով.

ա) շրջիկ խոհանոցի կամ ճաշարանի կողմից սննդի կազմակերպման ծառայություն մատուցող հասարակական կազմակերպությունների միջոցով կամ

բ) մթերքի, հագուստի, կոշիկի, հիգիենայի միջոցների, երեխաների խնամքի պարագաների, առաջին անհրաժեշտության կենցաղային այլ ապրանքների համար ընտանիքին՝ մինչև 30000 դրամ, գումարած ընտանիքի 2-րդ անդամից սկսած յուրաքանչյուր անդամին մինչև 10000-ական դրամ՝ մատուցված ծառայության փոխհատուցման եղանակով։

Բնաիրային օգնության ծառայությունը կարող է տրամադրվել 12 ամսվա ընթացքում մինչև 2 անգամ, բացառությամբ այն դեպքերի երբ այդ ընտանիքում կյանքի նոր դժվար իրավիճակներ են ի հայտ եկել ։

3) **Կենցաղային օգնությունը** տրամադրվում է անձին կամ ընտանիքին կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու հանգամանքների առաջացման կանխարգելման կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին կամ ընտանիքին այդ վիճակից դուրս բերելուն ուղղված կենցաղային պահանջմունքները բավարարելու նպատակով։ Կենցաղային օգնությունը կարող է տրամադրվել անձի տեղափոխման կազմակերպման կամ տեղափոխման հետ կապված ծախսերի հատուցման եղանակով։

4) **Իրավաբանական օգնությունը տրամադրվում է** անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով՝ օրենքով սահմանված իր

իրավասությունների շրջանակում կամ ուղղորդվում է «Փաստաբանության մասին» օրենքով սահմանված դեպքերում հանրային պաշտպանի գրասենյակ անվճար իրավաբանական օգնություն ստանալու նպատակով:

5) **Սոցիալ-հոգեբանական օգնությունն իրականացվում է** անձի կենսագործունեությանը և սոցիալական ներառմանը խոչընդոտող ներանձնային կամ միջանձնային խնդիրների լուծման կամ մեղմացման, ինչպես նաև անձի՝ սոցիալական հարաբերությունների կառուցման կամ վերականգնման համար անհրաժեշտ հմտությունների զարգացմանն ուղղված սոցիալական ծառայության միջոցով:

6) **օրենսդրությամբ նախատեսված այլ սոցիալական ծառայությունների** շրջանակում կարող են տրամադրվել հետևյալ ծառայությունները.

ա/ Սոցիալապես անապահով ընտանիքների կացարանների ընթացիկ վերանորոգման, հարմարեցման աշխատանքների համար սոցիալական աջակցության ծառայությունների մասնակի դրամական փոխհատուցում յուրաքանչյուր ընտանիքին 12 ամսվա ընթացքում մինչև 400000/չորս հարյուր հազար/ դրամի չափով.

բ/ Սոցիալապես անապահով ընտանիքներին բժշկական ծառայությունների դիմաց մասնակի դրամական փոխհատուցում 12 ամսվա ընթացքում մինչև 400000/չորս հարյուր հազար/ դրամի չափով.

գ/ Սոցիալապես անապահով ընտանիքներին դիմելուն օրվան նախորդող երեք ամսվա ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ հուղարկավորության ծառայությունների փոխհատուցում մինչև 200000/երկու հարյուր հազար/ դրամի չափով չփոխհատուցված ծառայության մատուցման հիմքերի առկայության դեպքում.

դ/ Սոցիալապես անապահով ընտանիքների անդամների պետական բարձրագույն, մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորելու դեպքում ուսուցման ծառայության վարձավճարների փոխհատուցում մինչև 200000/երկու հարյուր հազար/ դրամի չափով՝ ուսումնական տարվա ընթացքում մեկ անգամ, բացառությամբ ԱԳՀ/անապահովության գնահատման համակարգ/-ում հաշվառված ընտանիքների:

ե/ միայն կենսաթոշակառուներից, ծերության կամ հաշմանդամության նպաստառուներից բաղկացած ընտանիքներին՝ բնաիրային օգնության ծառայության փոխհատուցում մինչև 30000 դրամի չափով՝ 12 ամսվա ընթացքում առավելագույնը 3 անգամ:

8. Համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների և դրանց լուծման համար սեփական լիազորությունների իրականացման համար Համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները չեն կարող գերազանցել տվյալ տարվա համար համայնքի բյուջեում օրենքով ներկայացված սեփական եկամուտների ընդհանուր ծավալի 5%-ը:

9. Սոցիալական կամավոր խնդիրների լուծման համար ֆինանսական միջոցների հատկացումն իրականացվում է Համայնքի տարեկան բյուջեն հաստատելու մասին համայնքի ավագանու (այսուհետ՝ Ավագանի) որոշմամբ:

10. Այն դեպքում, երբ Համայնքի ղեկավարի կողմից կամավոր խնդիրների լուծման համար չի պահանջվում ֆինանսական կամ գույքային միջոցների

հատկացում՝ Համայնքի ղեկավարն այն իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

11. Համայնքի բյուջեի միջոցներից տրամադրվող սոցիալական աջակցության տեսակներից դրամական փոխհատուցման ենթակա են՝ սույն կարգի 7-րդ կետի 2-րդ, 3-րդ, 6-րդ ենթակետերով սահմանված սոցիալական ծառայությունների տրամադրումը:

12. Սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական փոխհատուցմամբ տարբեր սոցիալական աջակցության ծառայությունների հանրագումարը միևնույն ընտանիքին 12 ամսվա ընթացում չի կարող գերազանցել մինչև 400000 /չորս հարյուր հազար/ դրամը:

13. Սույն կարգի 7-րդ կետով նախատեսված սոցիալական աջակցություն տրամադրելիս հաշվի են առնվում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սոցիալական կարիքների գնահատման չափորոշիչները և անապահովության գնահատման հետևյալ բնութագրիչներից մեկը կամ մի քանիսը միաժամանակ՝

1) Համայնքում հաշվառված լինելը և փաստացի բնակվելը,
2) ընտանիքի կազմը և ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական խումբը,
3) ընտանիքի անաշխատունակ անդամների թիվը,
4) ընտանիքի եկամուտը և կենսապահովման միջոցները,
5) ընտանիքի բնակարանային պայմանները,
6) համայնքապետի, ավագանու անդամի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի կամ համայնքային ծառայողի հետ համատեղ տնտեսություն վարելը:

14. Սույն կարգի 13-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված բնութագրիչի բացակայությունը, ինչպես նաև 6-րդ ենթակետով նախատեսված բնութագրիչի առկայությունը բացառում է սույն կարգով սոցիալական աջակցության ծառայություններից որևէ մեկով դրամական փոխհատուցումը:

15. Համայնքի ղեկավարի կողմից սոցիալական աջակցության տրամադրումն իրականացվում է պետական լիազոր մարմնի սահմանած սոցիալական ծառայություններին ներկայացվող և Համայնքի ավագանու կողմից հաստատված սոցիալական կարիքների գնահատման նվազագույն չափորոշիչներով:

16. Սույն կարգի 13-րդ կետի 2-5-րդ ենթակետերով նախատեսված բնութագրիչները հաշվի են առնվում չափորոշիչներով գնահատման ժամանակ:

17. Սոցիալական աջակցության ծառայությունը տրամադրվում է ելնելով աշխատակազմի համապատասխան մասնագետի անհատական գնահատումից:

18. Նույն ընտանիքին տարվա ընթացքում առանց դրամական փոխհատուցման սոցիալական աջակցություն կարող է հատկացվել ըստ կարիքի:

19. Անհատական սոցիալական ծրագրերով տրամադրվող այլ ծառայությունները որոշվում են սոցիալական աջակցություն ստացողի

սոցիալական կարիքներին համարժեք՝ «Սոցիալական աջակցության մասին» օրենքին համապատասխան:

20. Սույն կարգի խախտմամբ տրամադրված սոցիալական աջակցության գումարները ենթակա են վերադարձման Համայնքի բյուջե՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**